ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ -
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ — ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ՝ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

76ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԸ Հայ ազգի մամուլին երիցագոյն ներկայացուցիչն՝ 1918ին կը սկսի Նոր շրջան մը։

ԲԱԶՄԱՎԷՊի արդի խմբագրութիւնը՝ յարգելով իւր նախորդաց գործունէութեան ծրագիրը՝ պիտի ճգնի Գիտական, Գեղարուեստական, Բարոյական և Դիպրոցական մասնաճիւղերու աւելի ոյժ տալ. հետևաբար պիտի ջանայ, Վարդապետականը՝ Գործնականին, Բանասիրականը՝ Գիտականին, Գեղարուեստականը՝ Մանկավարժականին և Օգտակարը՝ Զուարճալիին հետ հաշտեցնել։

ԲԱԶՄԱՎԷՊը Հայ Ազգիս բարոյական, իմացական, կենցաղական զարգացմանը նպաստելու դիտաւորութեամբ, պիտի բովանդակէ Համազգային Ուսմանց և Գիտութեանց և Գեղեցիկ Դպրութեանց այժմէութիւններ՝ ինքնագիր կամ թարգմանածոյ։

ԲԱԶՄԱՎԷՊը որպէս զի ամբողջ Հայ մտքին՝ 1900էն մինչև ցարդ ի լոյս ընծայած կարևոր արտադրութիւններուն և հրատարակութիւններուն տեղեակ ընէ իր ընթերցողները, զարձեալ պիտի աշխատի ԳՐԱԽՕՍԱԿԱՆ բաժնին մէջ՝ խմբագրութեանս նուիրուած ամէն զրքերու և ՀԱՅԵՐԷՆ կամ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ՀԱՅ հեղինակութիւններու կամ Գեղարուեստական արտադրութիւններու վրայ, հակիրճ տեսութիւններ հրատարակել։

ԲԱԶՄԱՎԷՊը 1918ի շրջանին մէջ՝ պիտի ջանայ իր անուան հաւատարիմ մնալով՝ Բազում վէպեր՝ այսինքն գիտութիւններ մատուցանել՝ գրասէր և ընթերցասէր Հայորդւոց և անգամ մը ևս գնահատելի իբրև ՀԱՄԱՏՆԱԳԻՏԱՐԱՆ հայկական մտքի։

ԲԱԶՄԱՎԷՊը ամէն ամսուան սկիզբը լոյս պիտի տեսնէ և անմիջապէս պիտի ուղարկուի բաժանորդներու և մեզի հետ պարբերական հրատարակութիւններ փոխանակողներու։ ԲԱԶՄԱՎԷՊի պրակներու առաքման և ընդունելութեան յապաղումները կամ թղթատարութեանց կամ պետական նոր օրէնքներու տրամադրութեանց պէտք է վերագրուին։ Խմբագրութիւնս պիտի շարունակէ բացառիկ զրքոյկներ կամ գրախօսական գրացուցակներ նուէր յղել։

ԲԱԶՄԱՎԷՊի Խմբագրութիւնս և Ցպարանիս վարչութիւնը ընդհանուր սղութեան անտեղիտալի պահանջին հանդէպ, և բազմաթիւ արգելքներու և ծախսերու հրամայական հարկին տակ՝ յանձն առնելով ամէն զոհողութիւն, կը շարունակէ ամենաչափաւոր պայմաններով Բաժանորդներ արձանագրել, սա պէս.

ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Առանձնականներու	համար	ֆրանք	15, —	Ցոլար	3, —	Ռուբլ	6, —
Գրավաճառներու	»	»	13, 50	»	2, 70	»	5, 30
Ուսուցիչ և ուսանողաց	»	»	10, —	»	2, —	»	4, —
Ազգային դպրոցներու	»	»	5, —	»	1, —	»	2, —
Որբանոցներու	»	»	2, 50	»	0, 50	»	1, —

digitised by A.R.A.R.@